ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2019, հ. 72, N 2, 88-89
Известия НАН РА Науки о Земле, 2019, т. 72, N 2, 88-89
Proceedings NAS RA, Earth Sciences, 2019, v. 72, N 2, 88-89

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԱՎԱԳՅԱՆ ԹՈՌՆԻԿ ԱՐՍԵՆԻ
(1935-2019)

2019թ. հուլիսի 8-ին կարճատև ծանր հիվանդությունից հետո վախճանվեց ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) առաջատար գիտական աշխատող երկրաբանա-միներալոգիական գիտությունների դոկտոր Թոռնիկ Արսենի Ավագյանը: Ճակատագրի բերումով նա վախճանվեց մեկ օր առաջ իր ծննդյան տարեդարձից:

Թ. Ավագյանը ծնվել է 1935թ. հուլիսի 9-ին Երևանում, 1958թ. ավարտել է Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ-երկրաբան հետախույզի որակավորում: 1959-1963թթ. աշխատել է Երկրաբանական վարչության տարբեր արշավախմբերում, 1964-1967թթ. ուսանել է ԵԳԻ ասպիրանտուրայում:

1970թ. Թ.Ավագյանը պաշտպանեց իր թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված էր Սիսիանի դիատոմիտային հանքավայրի նյութական կազմին, առաջացման առանձնահատկություններին և տարբեր բնագավառներում դիատոմիտների օգտագործման հեռանկարներին:

1992թ. Թ.Ավագյանը Մոսկվայում հաջողությամբ պաշտպանեց իր դոկտորական ատենախոսությունը՝ «Հայաստանի հրաբխադիատոմիտային ֆորմացիայի երկրաբանությունը, առաջացման օրինաչափությունները և դիատոմիտների հանքավայրերը»: Թ.Ավագյանի հետագա երկարամյա գործունեությունը կապված էր ՀՀ ամբողջ տարածքի դիատոմիտային հանքավայրերի և երևակումների բազմակողմանի ուսումնասիրման հետ: Գիտական հետազոտությունների արդյունքում նա առանձնացրեց և եզրագծեց դիատոմիտային տարբեր ավազանները, պարզաբանեց նրանց լիթոլոգաշերտագրական առանձնահատկությունները, առանձնացրեց ապարկազմող և գերակշռող դիատոմային ձևերը, ուսումնասիրեց և պարզաբանեց դիատոմիտային ապարների միներալային և քիմիական կազմը, ի հայտ բերեց դիատոմիտային ավազաններ մուտք գործող սիլիկահողերի տարբեր՝ բիոգեն և քիմիական աղբյուրները:

Հարկ է հատուկ նշել, որ Թ.Ավագյանը իր հետազոտությունների ընթացքում առաջնահերթ ուշադրություն էր դարձնում ստացված արդյունքների կիրառական հարցերին: Նա իր համահեղինակների հետ ցույց տվեց, Ախուրյանի դիատոմիտային ավազանի կարբոնատային ապարների օգտագործման հնարավորությունը որպես միներալային կեր գյուղատնտեսական անասունների և թռչունների համար (Արտոնագիր N 3205A), Որոտան-Գորիս դիատոմիտաբեր ֆոսֆորիտային ապարների օգտագործման հնարավորությունը (հարստացումից հետո), որպես հացահատիկային մշակաբույսերի աճեցման եղանակ (Արտոնագիր N 3039A), նոր բաղադրության զունավոր ապակիների ստացման հնարավորությունը, դիատոմահրաբխային փոշեապարների հիման վրա (Արտոնագիր N 2038A2):

Առանց չափազանցության կարելի է հավաստել, որ Թ.Ավագյանը Հայաստանի Հանրապետության դիատոմիտների հետ կապված տարբեր հարցերի լավագույն գիտակն էր:

Թ.Ավագյանը ճանաչված գիտնական էր, բազմիցս հանդես է եկել զեկուցումներով համամիութենական և հանրապետական խորհրդակցություններում: Տարբեր տարիների ընթացքում եղել է թեմայի ղեկավար: Նա շուրջ 80 գիտական աշխատանքների, այդ թվում 3 մենագրությունների (երկուսը համահեղինակությամբ) հեղինակ և համահեղինակ է:

Թ.Ավագյանը բարի հարաբերություններ ուներ ինստիտուտի տարբեր հասակի աշխատակիցների հետ, աջակցում էր բոլորին, ովքեր զանազան հարցերով հաճախ դիմում էին նրա օգնությանը:

Հարկ է նշել Թ.Ավագյանի յուրահատուկ բարի հումորի զգացումը: Նրա թիրախն էին դառնում ոչ միայն ինստիտուտի և այլ ճանաչված անձնավորություններ, այլ՝ նաև ինքը:

Թ.Ավագյանի անսպասելի վախճանը ծանր հարված էր նրա ընտանիքի, մերձավորների, ընկերների ու բոլոր նրանց համար, ովքեր սիրում, ճանաչում և հարգում էին այդ համեստ և բարյացակամ անձնավորությանը: Կարելի է համոզված լինել, որ Թ.Ավագյանի կերպարը միշտ վառ կմնա նրան ճանաչողների հիշողություններում:

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռ.Լ.Մելքոնյան